



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2011թ. առաջին եռամսյակում /վերլուծություն/

2011թ. առաջին եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 41617 գործարքներ, որոնց քանակը 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 15.6%-ով, իսկ 2010թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 14.0%-ով:

2011թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 10105 օտարման գործարքների 77.9%-ը կազմել են առուվաճառքները, 21.5%-ը՝ նվիրատվությունները և 0.6%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 35.3%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.4%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2011թ. առաջին եռամսյակում, 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 19.4%-ով, իսկ 2010թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 4.2%-ով:

2011թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 68.8%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2011թ. առաջին եռամսյակում, 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 25.8%-ով, իսկ 2010թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 11.5%-ով:

2011թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինագված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	առաջին եռամսյակ 2010թ.	առաջին եռամսյակ 2011թ.	չորրորդ եռամսյակ 2010թ.
Կենտրոն	470600	444500	445300
Արաբկիր	373900	352200	361500
Քանաքեռ-Զեյթուն	283500	272700	278000
Նոր-Նորք	234800	226200	228000
Ավան	235900	229400	235800
Էրեբունի	248000	235300	242500
Ծննդավիթ	249100	235300	240800
Դավթաշեն	270300	259000	265500
Աջափնյակ	239300	221200	227400
Մայաթիա-Սեբաստիա	236700	220000	228100
Նուբարաշեն	143300	148700	149100
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b>	<b>271400</b>	<b>258600</b>	<b>263800</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2011թ. առաջին եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել են 2.0%-ով:

2011թ. առաջին եռամսյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 949 բնակարաններ, որոնց քանակը, 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 14.9%-ով, իսկ 2010թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 7.1%-ով:

2011թ. առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինագված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		առաջին եռամսյակ 2010թ.	առաջին եռամսյակ 2011թ.	չորրորդ եռամսյակ 2010թ.
Արագածոտն	Աշտարակ	142200	135500	139600
	Ապարան	44800	46500	45900
	Թալին	52100	57800	57400
Արարատ	Արտաշատ	92800	93000	96900
	Մասիս	125400	131700	135400
	Վեդի	92600	94200	96100
Արմավիր	Արարատ	88600	84300	85000
	Վաղարշապատ	156900	150800	158200
	Արմավիր	120500	124700	126100
	Մեծամոր	81300	84000	84900

Գնդարքունիք	Սևան	93100	90500	94300
	Գավառ	45300	48000	48400
	Մարտունի	83700	86800	87000
	Վարդենիս	32500	31800	32000
	Ճամբարակ	19100	20800	20500
Լոռի	Վանաձոր	90400	89800	92000
	Ստեփանավան	57500	60400	59800
	Սալիտակ	80000	84500	83700
	Ալավերդի	30800	33900	33600
	Տաշիր	35200	37400	37100
	Թումանյան	6100	7300	6200
	Շամլուղ	3400	4200	3400
	Ախթալա	14100	15200	14400
Կոտայք	Աբովյան	160000	144200	149800
	Նոր Հաճն	125500	129500	133300
	Բյուրեղավան	102400	104300	105900
	Եղվարդ	117400	108700	110300
	Հրազդան	62700	61000	62800
	Ծաղկաձոր	181500	178700	177300
	Չարենցավան	77200	76400	77300
Շիրակ	Գյումրի	119700	112400	117700
	Արթիկ	58400	62500	63100
	Մարալիկ	30700	30200	30300
Սյունիք	Գորիս	138100	138300	138800
	Լապան	99300	101400	103700
	Սիսիան	79700	84500	83700
	Մեղրի	58200	62300	61800
	Ագարակ	33000	35200	34500
	Քաջարան	60600	61000	61000
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	71100	72600	71900
	Եղեգնաձոր	107100	109900	110700
	Ջերմուկ	111800	122400	121100
Տավուշ	Դիլիջան	96700	106100	106600
	Իջևան	138200	131500	132800
	Բերդ	42000	43000	42200
	Նոյնեբերյան	33600	35000	34400
	Այրում	24000	24500	24200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2011թ. առաջին եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել են 1.2%-ով:

2011թ. առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 972 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 243, մարզերում միասին վերցրած՝ 729: 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 28.3%-ով, ընդ որում, Երևանում՝ 31.4%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 27.2%-ով: 2010թ. առաջին եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 11.2%-ով, ընդ որում Երևանում՝ 9.3%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 11.9%-ով:

2011թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	առաջին նախնական 2010թ.	առաջին նախնական 2011թ.	չորրորդ նախնական 2010թ.
Կենտրոն	484200	469970	476400
Արաբկիր	380800	379300	389700
Քանաքեռ-Զեյթուն	288800	286200	292700
Նորք-Մարաշ	284300	277100	279200
Ավան	239400	242100	250100
Էրեբունի	252400	241500	253200
Ծննդավիթ	252200	247800	256000
Դավթաշեն	277300	272100	280400
Աջափնյակ	243700	236800	245700
Մալաթիա-Սեբաստիա	242100	232500	244200
Նուբարաշեն	147200	150100	150700
<b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b>	<b>281100</b>	<b>276000</b>	<b>283500</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2011թ. առաջին նախնական անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2010թ. չորրորդ նախնականի համեմատ, նվազել են 2.6%-ով:

2011թ. առաջին նախնական հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		առաջին նախնական 2010թ.	առաջին նախնական 2011թ.	չորրորդ նախնական 2010թ.
Արագածոտն	Աշտարակ	146100	141800	146100
	Ապարան	47600	48400	49100
	Թալին	54300	58400	58800
Արարատ	Արտաշատ	99400	100300	101500
	Մասիս	127100	137000	139500
	Վեդի	95300	98200	100600
	Արարատ	92800	88800	89900
Արմավիր	Վաղարշապատ	165900	163600	166900
	Արմավիր	124500	131000	131300
Գեղարքունիք	Սևան	95200	96100	99200
	Գավառ	47600	50800	51400
	Մարտունի	86700	88900	90400
	Վարդենիս	34600	34200	34600
	Ճամբարակ	21300	23000	23000
Լոռի	Վանաձոր	96800	98900	98800
	Ստեփանավան	61200	63000	63600
	Սպիտակ	81500	86500	87200
	Ալավերդի	35000	36300	36400
	Տաշիր	38400	40800	40500
	Թումանյան	10400	10800	10800
	Շամլուղ	7500	7700	7500
	Ախթալա	18200	18300	18300

Կոտայք	Աբովյան	165300	158500	165700
	Նոր Հաճն	134600	135800	137800
	Բյուրեղավան	108900	108700	110200
	Եղվարդ	128100	113700	118500
	Հրազդան	64700	65200	66850
	Մաղկաձոր	305400	316700	318600
	Չարենցավան	80300	79200	81000
Շիրակ	Գյումրի	123100	121700	127500
	Արթիկ	61000	63300	64900
	Մարալիկ	31700	32400	32750
Սյունիք	Գորիս	143900	143300	144300
	Կապան	104200	106800	107500
	Սիսիան	84500	86200	86700
	Մեղրի	60000	64700	64050
	Ագարակ	35000	36000	35900
	Դաստակերտ	10500	10500	10500
Վայոց Ձոր	Վայք	73900	74800	75300
	Եղեգնաձոր	114300	112500	114100
	Ջերմուկ	116500	122900	123300
Տավուշ	Դիլիջան	101000	109700	112100
	Իջևան	141100	134700	138100
	Բերդ	43900	44700	44400
	Նոյեմբերյան	35200	36500	36100
	Այրում	25900	26100	26100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել են 1.5%-ով:

Ընդհանուր առմամբ, 2011թ. առաջին եռամսյակում հանրապետությունում օտարվել են 3653 միավոր /3179.41 հա/ հողեր, որից Երևանում՝ 121 միավոր /11.15 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2018 միավոր /2980.08 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.35 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 1192 միավոր /116.94 հա/, որից Երևանում՝ 95 միավոր /7.29 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 377 միավոր /30.04 հա/, որից Երևանում՝ 22 միավոր /3.48 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 34 միավոր /48.24 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.03 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 10 միավոր /2.52 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 22 միավոր /1.60 հա/:

2011թ. առաջին եռամսյակում հանրապետությունում օտարված հողերից 3195 միավորի /2996.33 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 89 միավոր /8.28 հա/, նվիրատվության գործարքներ՝ 426 միավոր /177.48 հա/, որից Երևանում՝ 27 միավոր /2.28 հա/ և փոխանակության գործարքներ՝ 32 միավոր /5.60 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /0.59 հա/:

Հանրապետությունում 2011թ. առաջին եռամսյակում, 2010թ. առաջին եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 2.8%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների

քանակը նվազել է 4.0%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 0.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 49.2%-ով: Հողերի առավաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Կոտայքի մարզում՝ 1267.79 հա, որից 1211.42 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Վաճառված հողերի քանակի 27.9% կամ 890 գործարքներ /1410.52 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 12 գործարքներ /1.54 հա/, իսկ 71.3% կամ 2279 միավորը /1580.33 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 74 միավոր /6.71 հա/: 2011թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել են հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 26 գործարք /5.49 հա/:

Ստորև ներկայացվում է 2011թ. առաջին եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առավաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները:

	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	7	0.37	5	1.17	2	0.14	1	0.03	64	5.12	7	1.42
Արագածոտն	27	25.09	1	0.25	5	0.58	9	0.50	130	147.98	2	0.50	55	5.28	4	0.20
Արարատ	19	57.02	4	4.00	60	5.22	35	1.92	144	94.51	2	0.20	112	9.93	9	4.20
Արմավիր	33	69.82	2	0.37	1	0.02	13	0.67	209	641.62	1	1.11	127	12.27	13	0.12
Գեղարքունիք	34	31.54	4	2.84	65	7.76	30	1.93	73	37.25	0	0.00	58	6.57	7	0.82
Լոռի	8	7.47	1	0.17	6	0.14	39	0.43	359	178.71	0	0.00	58	6.70	6	1.07
Կոտայք	144	1097.49	6	32.89	67	6.14	34	0.72	237	113.93	1	0.10	184	13.54	19	1.22
Շիրակ	3	11.16	1	0.19	44	1.16	37	0.91	77	72.45	0	0.00	35	4.19	4	0.05
Սյունիք	2	1.35	4	0.56	6	0.76	13	0.66	134	163.08	0	0.00	15	1.81	0	0.00
Վայոց Ձոր	24	19.13	0	0.00	5	0.49	22	6.06	33	29.03	0	0.00	9	0.79	12	2.63
Տավուշ	5	1.77	1	0.02	22	7.74	19	0.44	26	15.33	0	0.00	41	4.52	3	0.14
Ընդամենը	299	1321.84	24	41.29	288	30.38	256	15.41	1424	1494.03	7	1.94	758	70.72	84	11.87

Ստորև ներկայացվում է 2011թ. առաջին եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	4	0.10	0	0.00	4	0.10	0	0.00	8	1.44	0	0.00	0	0.00	3	0.27	5	1.17
Արագածոտն	2	0.12	0	0.00	1	0.10	1	0.02	35	25.10	22	23.90	1	0.25	4	0.48	8	0.47
Արարատ	6	3.99	2	3.98	0	0.00	4	0.01	112	64.17	19	57.02	2	0.02	60	5.22	31	1.91
Արմավիր	5	0.61	1	0.02	1	0.02	3	0.56	44	70.27	33	69.82	1	0.35	0	0.00	10	0.10
Գեղարքունիք	2	0.005	0	0.00	0	0.00	2	0.005	131	44.07	34	31.54	4	2.84	65	7.76	28	1.93
Լոռի	8	0.07	0	0.00	1	0.03	7	0.04	43	6.92	5	6.26	1	0.17	5	0.11	32	0.38
Կոտայք	31	2.74	0	0.00	27	2.73	4	0.01	216	1133.92	140	1096.91	6	32.89	40	3.41	30	0.71
Շիրակ	26	0.67	1	0.19	18	0.36	7	0.12	59	12.76	3	11.16	0	0.00	26	0.80	30	0.80
Սյունիք	13	0.56	1	0.19	4	0.06	8	0.31	11	1.91	1	0.50	3	0.36	2	0.70	5	0.35
Վայոց Ձոր	5	0.21	0	0.00	1	0.20	4	0.01	46	25.47	24	19.13	0	0.00	4	0.29	18	6.05
Տավուշ	6	0.51	0	0.00	6	0.51	0	0.00	41	9.46	5	1.77	1	0.02	16	7.23	19	0.44
Ընդամենը	108	9.59	5	4.38	63	4.11	40	1.09	746	1395.49	286	1318.01	19	36.90	225	26.27	216	14.31

Հանրապետությունում 2011թ. առաջին եռամսյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 13 գործարքներ /3.82 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2011թ. առաջին եռամսյակում, 2010թ. առաջին եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 31.1%-ով: Ընդ որում Երևանում աճել է 8 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած աճել է 29.9%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 47.4%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել է 63.0%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 4.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 13.6%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2011թ. առաջին եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	17	19.09	19.4	720.0	248.7	84	80.83	365.0	12000.0	4385.8
Ապարան	1	0.02	408.0	408.0	408.0	4	1.70	86.5	2727.3	623.3
Թալին	4	4.80	84.0	195.3	140.0	28	32.20	93.6	5494.5	555.2
Ծաղկառովիս						11	32.09	79.5	1000.0	212.3
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	3	1.20	80.4	85.5	82.1	19	4.86	335.1	10833.3	2495.2
Մասիս	14	30.82	60.8	4493.4	698.7	35	51.06	200.0	11904.8	2831.7
Վեդի	2	25.00	505.0	513.3	509.2	78	36.87	207.0	10795.1	1766.3
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	17	20.27	62.9	2352.1	168.9	117	75.51	294.3	9090.0	1458.8
Բաղրամյան	10	43.69	67.1	598.4	149.9	31	527.19	90.6	2561.1	773.8
Վաղարշապատ	6	5.86	63.1	1596.8	288.9	56	32.64	444.4	11764.7	2888.5

Գնդարքունիքի մարզ										
Գավառ	16	13.13	55.0	553.3	297.2	34	10.81	199.8	1875.0	369.0
Ճամբարակ	1	1.50	950.0	950.0	950.0			60.5	953.3	315.0
Մարտունի	2	1.17	110.3	136.4	123.3	23	6.12	51.1	2850.0	679.0
Սևան								52.2	2134.8	281.5
Վարդենիս	15	15.73	153.9	452.0	191.7	16	20.32	41.2	2575.1	407.8
Լոռու մարզ										
Այվազ						66	28.20	170.4	6424.2	826.3
Գուգարք	1	0.71	371.7	371.7	371.7	132	42.52	234.6	6065.9	916.6
Սայխակ						10	5.88	250.0	5555.5	667.1
Ստեփանավան	4	5.55	529.7	770.5	601.4	14	10.22	90.6	1686.6	305.2
Տաշիր						88	59.09	45.3	1384.4	154.9
Կոտայքի մարզ										
Աբովյան	19	30.52	48.8	1753.4	382.7	72	19.53	279.3	11942.7	4763.6
Եղվարդ	18	26.74	73.8	3179.7	367.9	98	47.71	174.4	11971.8	3286.6
Հրազդան	103	1039.65	33.9	74045.1	1328.7	66	46.33	130.5	10256.4	1911.9
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	6.58	282.2	282.2	282.2	41	33.93	252.0	1693.1	592.7
Ամասիա						3	5.78	40.9	261.0	137.7
Անի						24	20.30	110.6	546.9	349.2
Աշոցք	2	4.58	262.4	262.4	262.4	4	7.51	58.5	215.8	107.2
Արթիկ						5	4.94	79.4	1428.6	315.9
Սյունիքի մարզ										
Գորիս						54	16.31	92.6	1023.2	593.0
Կապան	1	0.50	84.0	84.0	84.0			120.0	841.6	310.0
Մեղրի						1	0.41	193.0	3000.0	659.4
Սիսիան						79	146.36	46.3	1977.4	395.9
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	15	7.43	39.1	629.8	199.6	19	5.09	125.0	10000.0	1746.0
Վայք	9	11.70	68.9	385.7	89.2	14	23.94	58.8	1430.7	526.8
Տավուշի մարզ										
Բերդ						6	1.43	213.3	3783.8	621.5
Իջևան	1	0.03	2200.0	2200.0	2200.0	3	1.12	267.5	9454.5	1198.5
Նոյեմբերյան	4	1.74	340.0	902.0	472.1	17	12.78	46.7	7368.4	906.8

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծ լինելը կապված է հողերի տնտեսագործությունից և հողատնտեսներից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2011թ. առաջին եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մավերեք /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մավերեք /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	4	4792.0	177.9	180.6	179.9	45	36986.0	130.7	22200.0	2573.0
Ապարան						2	1046.0	124.1	609.6	315.3
Թալին						6	11540.0	63.2	1454.8	152.2
Ծղադահովիտ						1	2650.0	60.0	214.3	81.7



Արարատի մարզ										
Արտաշատ	18	17269.0	283.6	3265.4	407.3	11	10537.0	173.9	7140.3	894.0
Մասիս	42	34883.0	666.0	3287.2	1239.6	68	56201.5	187.5	25000.0	1210.0
Վեդի						33	32579.0	126.1	5000.0	662.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						63	69392.0	131.6	9090.9	1215.0
Բաղրամյան						2	2200.0	100.0	833.3	214.3
Վաղարշապատ						61	49902.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	61	75155.0	140.0	319.3	174.9	11	11180.0	186.6	1084.3	555.3
Ճամբարակ								71.3	2286.2	149.3
Մարտունի						39	45824.0	119.3	5000.0	275.0
Սևան	4	2440.2	465.8	1254.3	1115.1	5	4056.0	240.0	3110.4	266.4
Վարդենիս						3	4596.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Այվազ						9	8676.0	114.3	1388.9	215.2
Գուգարք	1	431.0	4750.2	4750.2	4750.0	2	1968.0	77.9	14083.3	918.5
Սպիտակ						42	48871.0	104.9	1348.3	200.0
Ստեփանավան	1	412.0	554.4	554.4	554.4	3	1754.0	88.2	1666.7	171.0
Տաշիր	3	213.6	282.7	422.0	323.9	1	730.0	45.3	400.0	83.9
Կոտայքի մարզ										
Աբովյան	8	12953.8	646.0	4319.6	2628.4	77	59067.5	264.5	35353.5	1965.0
Եղվարդ	25	14910.0	197.9	5062.5	3910.9	91	64490.0	173.6	27000.0	2837.2
Հրազդան	7	6251.0	272.0	1961.5	1372.6	14	9818.0	117.7	34848.5	1322.8
Շիրակի մարզ										
Ախուրյան	19	4984.5	554.7	8279.6	3600.5	22	24765.4	113.6	18750.0	330.8
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	2	900.0	88.0	375.0	231.5	5	7765.0	67.9	180.6	143.3
Աշոցք								40.8	144.0	60.0
Արթիկ	5	2165.0	250.0	603.3	467.8	8	9335.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						8	6955.0	112.2	1700.0	358.1
Կապան	1	6380.0	115.2	115.2	115.2			67.9	2638.9	272.0
Մեղրի						2	1800.0	68.5	632.9	170.8
Սիսիան	1	600.0	290.4	290.4	290.4	4	8670.0	123.5	875.0	181.3
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	4	2910.0	751.0	762.5	755.7	8	7396.0	96.7	7659.6	497.2
Վայք						1	500.0	120.7	1448.3	192.3
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	100.0
Իջևան	14	72244.0	94.6	3000.0	2892.4	36	37470.0	74.1	14423.1	499.2
Նոյեմբերյան	2	87.0	1100.0	1100.0	1100.0	5	7730.0	125.0	1948.1	197.2

2011թ. առաջին եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 24 գործարքներ 9.23 հա մակերեսով, ընդ որում 13-ը՝ /4.88 հա/ Կոտայքի, 3-ը՝ /0.20 հա/ Լոռու, 6-ը՝ /3.93 հա/ Տավուշի և 1-ական՝ /0.10 հա/ Արմավիրի, /0.12 հա/ Սյունիքի մարզերում:

2011թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2032 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.9%: Ընդ որում, վարձակալության գործարքների 87.5%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2011թ. առաջին եռամսյակում, 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 17.3%-ով, իսկ 2010թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 18.8%-ով:

2011թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 132 բնակարանների, 77 անհատական բնակելի տների, 1041

հասարակական նշանակության, 148 արտադրական նշանակության օբյեկտների, 603 միավոր /2513.94 հա/ հողերի և 31 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2011թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 32 վարձակալության գործարքների, այդ թվում 24 միավոր /0.02 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 15.8%-ով, իսկ 2010թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 22.0%-ով:

2011թ. առաջին եռամսյակում հանրապետությունում վարձակալված 2513.94 հա հողերից 6.54 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 2507.40 հա հողերի 31.77 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 0.30 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 983.85 հա, որից 973.31 հա գյուղատնտեսական նշանակության: 2011թ. առաջին եռամսյակում հանրապետության մարզերում վարձակալվել են 2467.14 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2011թ. առաջին եռամսյակում հանրապետության մարզերում գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունը.

Մարզի անվանումը	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	26	66.34
Արարատ	14	139.67
Արմավիր	16	33.27
Գեղարքունիք	61	365.17
Լոռի	133	752.40
Կոտայք	19	9.47
Շիրակ	30	63.06
Սյունիք	57	973.31
Վայոց Ձոր	19	53.21
Տավուշ	9	11.24
<b>Ընդամենը</b>	<b>384</b>	<b>2467.14</b>

2011թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5317 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.8%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 27.3%-ով, իսկ 2010թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 31.3%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /45.9%/, առանձնատների /26.6%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.5%/ և հողերի /10.8%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2343 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 21.8%-ով, իսկ 2010թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 32.9%-ով:

2011թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 764.41 հա հողեր, որից 12.38 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 96.1%-ը, կամ 734.54 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից 1.18 հա՝ Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 294.56 հա, որից 292.29 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2011թ. առաջին եռամսյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 493 գործարքներ, որից 373-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքների 84.0%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 12.8%-ը՝ անհատական բնակելի տների, 1.2%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 1.0ական%-ն՝ այգետնակների և հողերի նկատմամբ: 2010թ.

չորրորդ եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 0.8%-ով, ընդ որում Երևանում աճել է 2.8%-ով, մարզերում միասին վերցրած՝ նվազել 10.4%-ով, իսկ 2010թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 56.5%-ով, ընդ որում Երևանում՝ 65.8%-ով, մարզերում միասին վերցրած՝ 33.3%-ով:

2011թ. առաջին եռամսյակում հանրապետությունում ապապետականացման միջոցով մասնավորեցման գործարքներ չեն արձանագրվել:

2011թ. առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 6653 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 17.7%-ով, իսկ 2010թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 18.5%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.0%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /30.9%/:

***ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե***